



Ապրիլի 6-ից բնագիտական ֆակուլտետը ևս անցավ առցանց ուսուցման համակարգին: Ես որպես բնագիտական ֆակուլտետի Ուես Նախագահ, կուրսերի ավագներից ամեն օր տեղեկանում եմ դասապրոցեսների ընթացքի մասին և կարող եմ գնահատել այն լավ: Մենք բոլորս պարապում ենք ըստ դասացուցակի, եթե իհարկե համացանցի հետ կապված խափանումներ չեն լինում: Հեռավար ուսուցումն ունի իր դրական կողմերը: Դրական կողմերը համարում եմ այն, որ մենք վերալիցքավորում ենք մեր մտքերը, ձեռք բերում նորանոր գիտելիքներ և դա, կապված այժմյան իրավիճակի հետ, համարում եմ շատ արդյունավետ: Բացասական կողմը առաջին հերթին կապի խափանումն է դասապրոցեսներին և նրա թույլ լինելը: Մեծ սիրով եմ մասնակցում բոլոր դասերին: Մաղթում եմ բոլորին մեծ համբերություն, առողջություն, իսկ առողջ լինելու համար մնանք տանը և լինենք պարտաճանաչ:

**Էդիտա Առտաձյան,**  
**ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի Ուես Նախագահ,**  
**«Մաթեմատիկա» մասնագիտություն, 4-րդ կուրս**

\*\*\*

Պատմության և իրավագիտության ֆակուլտետում առցանց դասընթացներ սկսել ենք դեռևս մինչև համալսարանում այդ մասին որոշումն ընդունելը: Ընդհանուր առմամբ, դասերն անցնում են լավ, հետաքրքիր, ուսանողների բացակայությունը դասերից շատ քիչ է, որոշ կուրսերում ընդհանրապես բացակայում չեն լինում:



Հնայած ինտերնետ կապի ոչ այդքան լավ հասանելիությանը՝ դասերը կազմակերպել ու կազմակերպում ենք դասացուցակներին համապատասխան՝ համագործակցելով դեկանի, կուրսերի ավագների և համալսարանի ղեկավարության հետ՝ միաժամանակ վերահսկելով գործընթացը բոլոր կուրսերում:

Ֆակուլտետի ուսանողների և անձամբ իմ կողմից հնչեցված հիմնական խնդիրը ինտերնետ կապի թույլ հասանելիությունն է, որը, կարծում եմ, խնդիր է ողջ համալսարանի ուսանողների համար:

Հուսով եմ, որ այս վիճակից շատ արագ դուրս կգանք և նորից կանցնենք մեր բնականոն ռեժիմին: Առողջություն բոլորին:

**Աշխեն Ասրյան,**  
**«Պատմություն և իրավագիտություն» ֆակուլտետի Ուես Նախագահ,**  
**«Պատմություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի**

\*\*\*

Կարող եմ հավաստել, որ ուսանողությունը մեծ սիրով և պատասխանատվությամբ է մասնակցում պարապմունքներին: Առցանց ուսուցումը, իհարկե, կարող ենք համարել ձեռքբերում, որն ունի իր դրական և բացասական կողմերը: Ստեղծված իրավիճակում այն ուսուցման ծրագրից հետ չմնալու լավ



վագույն միջոցն է: Ըստ դասացուցակի՝ կազմակերպվում են բոլոր դասերը: Ուսանողների շրջանում կատարված հարցման արդյունքում առանձնացրել ենք ուսանողների ներկայացրած խնդիրները:

Դրանք հիմնականում համացանցի թույլ կապի հետ են կապված, որը երբեմն դասի խափանման պատճառ է դառնում, և գործնական պարապմունքների կազմակերպման, որոնց համար անհրաժեշտ են տարբեր մյուսեր, առարկաներ և այլն:

Ուսանողներն անհամբեր սպասում են համալսարանական ակտիվ օրերին, և, ինչպես նրանք են ասում. «ԱրՊՀ ուսանողների համար անհնարին ոչինչ չկա, մնում է միայն գնահատել կատարվող աշխատանքը և զինվել լավատեսությամբ»:

**Լիլիթ Սարգսյան,**  
**ԱրՊՀ Ուես Նախագահ,**  
**«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, 4-րդ կուրս**



### «Քո ժամանակը»

**ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՄՍԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ**

**Խմբագիր՝ Զ.ՍՄԱՆՅԱՆ**  
**Համարի պատասխանատու՝**  
**Վիկտորյա Ասրյան,**  
**լրագրություն 3-րդ կուրս**

Տպաքանակ՝ 400  
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի իրատարակչության տպարանում  
Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5:  
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:  
**ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂ**

# Քո ժամանակը

№ 3  
ՀՈՒՆԻՍ-ՀՈՒԼԻՍ  
2020

**ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՄՍԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ**

## Թե ինչպես են այս օրերին իրենց ժամանակը կազմակերպում մեր ուսանողները, արտակարգ իրավիճակը ինչպես է անդրադառնում ուսուցման գործընթացին, ստեղծագործական եռանդին, տրամադրության վրա, կփորձենք ներկայացնել մեր ուսանողների հետ ունեցած հարցազրույցների միջոցով

ԱրՊՀ «Լրագրություն» մասնագիտության 3-րդ կուրսում սովորող Ալյոնա Իսրայելյանը առցանց հարցազրույց է ունեցել ԱրՊՀ «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Ստեփանյանի հետ, ով, բացի ուսման բնագավառում առաջադիմություն դրսևորելուց, ունի նաև նկարելու շնորհ, որը նրա համար նախասիրություն է:

-Արուսյակ, ե՞րբ և ինչպե՞ս ծնվեց նկարելու հանդեպ սերդ և ինչու՞ ընտրեցիր հենց մանկավարժի մասնագիտությունը:

-Դեռ մանկուց հարազատներս նկատել էիմ իմ սերը նկարելու հանդեպ, բայց, այնուամենայնիվ, մանկության երազանքս ուսուցչուհի դառնալն էր: Տարիներ անց նկարչությամբ զբաղվելուս դրդապատճառը շրջապատս է:

-Վերջին երկու ամիսներին քո ֆեյսբուքյան էջում ակտիվորեն տեղադրում ես աշխատանքներդ՝ հիմնականում դիմանկարների տեսքով: Ինչու՞ է հենց դիմանկարի ժանրը քեզ հոգեհարազատ:

-Միշտ սիրել եմ աչքեր նկարել՝ հատկապես աղջկա, իսկ հետո աստիճանաբար մնացած դիմագծերն էի նկարում: Վերջին երկու ամիսներին տոների կապակցությամբ շատ պատվերներ ունեցա: Հաճելիորեն զարմացած էի, որ շատերը նախընտրեցին իրենց հարազատներին դիմանկարի տեսքով նվերներ տալ:

-Ուսո՞ւմ, թե՞ նախասիրություն, ո՞րն է ի վերջո հաղթելու ապագայում:

-Իմ սերը չի պակասում ռուսերենի, հատկապես՝ մանկավարժության հանդեպ: Նկարել նույնպես շատ սիրում եմ, հետևաբար հաղթելու է սերը թե՛ մեկի, թե՛ մյուսի նկատմամբ:

-Ուսման հարցում ևս առաջադեմ ես, մեկը մյուսին խանգարու՞մ, թե՞ լրացնում է:

-Ժամանակի առումով մեկը մյուսին չի խանգարում, բայց նկարելն ավելի շատ ժամանակ է պահանջում, քան ամենօրյա դասերով զբաղվելը:

-Հակիրճ ներկայացրու նկարներիդ ստեղծման ընթացքը՝ սկսած գաղափարի ծնունդից:

-Առաջին դիմանկարս ծնվեց 2018 թ. փետրվարին (համակուրսեցուս նկարն էր): Ընտանիքիս անդամների, ընկերուհիներիս, դասախոսներիս արձագանքները ինձ շատ ոգևորեցին ու մոտիվացրին: Հիմա արդեն ակտիվորեն զբաղվում եմ դիմանկարչությամբ, աշխատում եմ թերություններիս վրա, հիանում եմ տաղանդավոր նկարիչներով, շատերին փորձում եմ ընդորհակել՝ չկորցնելով սեփական ոճս: Նկարելու համար որոշ պարագաներ անհրաժեշտ են, բայց դրանք բոլորի համար հասանելի են:



Հնարավոր է նաև ձեռքի տակ ունեցած մեկ մատիտով դիմանկար ստանալ:

-Քեզ համար նկարելը...

-Նկարելը ինձ համար զգացմունքներս արտահայտելու միջոց է: Նկարում եմ, որովհետև մեղք եմ համարում չօգտագործել այն, ինչն ինձ տրված է Աստուծոց:

-Նաև նկարելու պատվերներ ես ընդունում, ինչպե՞ս ես կազմակերպում այդ աշխատանքները:

-Փորձում եմ բավարարել պատվիրատուի պահանջները թե՛ ժամանակի, թե՛ որակի առումով: Վերջերս երկու ժամվա ընթացքում հասցրեցի աղջկա դիմանկար ստանալ ու պատվիրատուին գոհացնել:

-Ինչպե՞ս ես կազմակերպում ժամանակը արտակարգ իրավիճակի պայմաններում:

-Փորձում եմ որևէ պիտանի գործով զբաղվել՝ համատեղելով դասերի հետ: Սկսել եմ ավելի շատ գրքեր կարդալ: Ինչպես այսօրվա յուրաքանչյուր ուսանող, ես էլ եմ պարտաճանաչ մասնակցում հեռավար դասընթացին, և ասեմ, որ ինձ համար այնքան էլ տարբերություն չկա նույն գիտելիքը կստանամ համալսարանում, թե էկրանի այն կողմից: Կարծում եմ, որ հեռավար ուսուցումը նույնիսկ որոշակի առավելություններ ունի:

Այս իրավիճակը տրամադրությանս վրա ընդհանրապես չի ազդում, բնույթով ինտրովերտ եմ, իմ առօրյան այդքան էլ չի փոխվել: Ուսանողներին մտրում եմ, որ իրենց ժամանակն այս օրերին արդյունավետ օգտագործեն: Առողջություն բոլորին:

# Մ Ի Փ Ո Ք Ր Ի Կ Լ ՈՒ Յ Մ



**Իսկ մթության մեջ պատկերներ երևու՞մ են:**  
**-Պատկերները, երևի թե, միայն մթությանն են ընկեր:**

**-Իսկ ինչպե՞ս պատկերացնեմ, մայրի՛կ:**  
**- Զգա, որ դու մենակ ես մթության մեջ, փակիր աչքերդ ու մոռացիր իմ այստեղ լինելու մասին ...**

**-Պաղար...խորը շունչ ու դողացող ծայն...**  
**-Անտանելի է, մայրի՛կ, մթությունը, քո՞ իմ կողքին չլինելը, ես մեր արևն եմ ուզում:**

**- Արևից չե՞ս հոգնի:**  
**- Չէ, մայրի՛կ, արևը մեզ համար բացում է իրականությունը, նրա շնորհիվ տեսնում ենք ծառը, ծաղիկը... քեզ:**

**- Իսկ նրանք, ովքեր չկան իրականում, ինչպես ծառն ու ծաղիկը, ինչպես ես...մեզ տեսանելի են դառնում մթության մեջ:**

**- Մայրիկ, դու սիրո՞ւմ ես մթությունը:**  
**-Իսկ դու ինձ սիրո՞ւմ ես:**  
**-Իհարկե, չէ՞ որ ես քո զավակն եմ, մենք հարազատներ ենք:**

**-Աղջիկս, նրանք, ում զավակն եմ ես, ովքեր իմ հարազատներն են, այնտեղ են, մթության մեջ, ես նրանց միայն այնտեղ կարող եմ տեսնել...**

Հռոռոցն անշուշտ իր լիցքը չէր ունենա, եթե չբավարարվեր ատամնաշարի նեղ շերտի բացվածքով: Լայն, թե նեղ, շատ, թե քիչ, հռոռոցն ու ծիծաղը լիցք կունենան: Իսկ ինչպես վարվել ցավի հետ:

Անհասանելիից հասանելի միշտ չէ, որ մի քայլ է ...մենք ապրում ենք արևի ջերմության, կապույտ երկնքի ներքո՝ մեր հոգու սևում ունենալով այդ բոլոր գույներից:

Քայլում ենք, վստահ ու նոր ուժով, հավատում, որ մեր քայլերը կհասնեն մեր երագած կանգառին, բայց երբեք չենք մոռանում, որ քայլեր են սառել ու մնացել կանգնած, երբեք չենք մոռանում, որ այդ սառած կանգառում մի թույլ դադար է պետք, մի պահ հիշել է պետք կանգառի վերջին ուղևորներին, մի փունջ ուշադրություն թողնել է պետք սառած քայլերին:

Այբբենարանում մեր տառերը գունազարդում են, տարբեր երանգներով ու նախշերով գրավում մեզ, որ սերտենք այն: Ավելի հասուն տարիքում սպիտակի վրա իրար հետևից շարված սև տառերը մեզ մեծ բավականություն են տալիս, եթե այդ տողերում գտնում ենք մեզ հոգեհարազատ, կամ զոհե՛ հասկանալի մտքեր:

Անտանելի է, որ երբեմն մեր գունազարդ էջերը սերտելու ժամանակ նույն այբբենարանի մեջ բացվում են սպիտակի վրա շարադրված սև տողեր: Ավելի անտանելի է, երբ գիտակցում ես նրանց չերագած հոգեհարազատության և ցավաբեր հասկանալիի մասին, ու որ այդ տողերը դու ստիպված ես սերտել ոչ թե նրա համար, որ տառերը գունազարդել են քեզ գրավելու համար, այլ նրա, որ քո կյանքն է այդպես ստիպում:

Ստիպում են, պարտադրում, որ հարմարվես, ապրես գունազարդ տառերով, բայց երբեք չմոռանաս քո ստանդարտ տառաչափի մասին: Ստիպում

են, ինչպես ստիպել են մեզ մթությունից վախենալ, վախենալ մթության մեջ անկանոն շարժումների հետևանքներից, անտեսանելիի վտանգից: Վախենում են անկանոնից՝ իրենք իսկ խախտելով բոլոր կարելի կանոնները...

Ու միակը, որը կարող ենք համարել չգրված կանոնի խախտում, դա այն է, որ երբեք չենք վախենում մեր հոգու մթությունից:

Հիշողության պաստառներից նուրբ, առանց պատառոտելու, դրվագներ ենք հանում ու կցում մեր ներկային, հարթեցնում, մոտեցնում, դարձնում մի ժապավեն ...

- Մայրիկ, իսկ քո մթության մեջ ինձ պատկերացնո՞ւմ ես:

- Պատկերացնելը ցավոտ է աղջիկս, ես քեզ տեսնում եմ թե մթության և թե լույսի ներքո...

Մի կես վայրկյան էլ ...

Եթե հնարավորություն լիներ փրկել աշխարհը, առաջինը կմտածեի՝ կոնկրետ ինչի՞ց: Եթե հասկանալի խնդիրը, նախ կստուգեի իմ ու աշխարհի աշխարհընկալման աստիճանները:

Տարբեր թելերից ստեղծված կծիկում դժվար է գտնել կծիկը քանոթը թելի կտորը, մասնավորապես երբ այն գրեթե անզույն է ու աներևակայելի երկար, կամ դժվար է համեմատել աստիճաններ, երբ դրանց հեռավորությունն այնքան երկար է, որ չափման միավորները ջղածգվել կցանկանան: Բայց խոստովանենք, դրանք չնչին են սրա դեմ՝ ես ինչպե՞ս փրկվեմ, որ փրկեմ աշխարհը... պատկերացնել կհաջողվի, փրկվել՝ հնարավոր է...

Երբ ստիպված լինես կիսել քո վերջին պատառը, միգուցե հասկանաս կուշտ լինելու գինը: Կուշտ կամ սոված, միևնույն է անխուսափելի է առնվազն մեկ անգամ ևս նման իրավիճակի մեջ հայտնվելը, տարբերությամբ՝ դու չես բողոքի քո կուշտ լինելուց: Ուրիշ է պատկերը, երբ կիսում ես այդ պահի քո վերջին վայրկյանը: Քեզ հավերժ չմարվող պարտք կմնան կես վայրկյան:


Սոված ստամոքսը լցվում է հետզհետե, մի կես վայրկյան էլ, և դու կշտացար, աշխարհի կծիկը շփոթված թելերի անկանոն հյուսից ազատվում է հատ-հատ, նույն վայրկյանի մյուս կեսը՝ և աշխարհը փրկված է: Դու՝ հասարակ՝ սեփական եսի և դառն սև սուրճի սիրահարից կես վայրկյանում կարող ես դառնալ աշխարհի փրկիչ: Բայց դա կախված է նրանից, թե երբ կվերադարձնեն քեզնից պարտք վերցրած քո կես վայրկյանը, կամ նրանից, թե քանի բաժանում ես տվել քո վայրկյանին: Մեր ապագան վստահում ենք աշխարհի կծկված թելերի բազմերանգության տարրերով հագած, երկարափեշ ու ինքնավստահ տիկնոջը, որպես գործիք էլ տալիս մեր դառն սև սուրճի խտացած ու մուգ նստվածքը, ու բողոքում, երբ այդ նստվածքը չի պատկերում մեր ուզած տառն ու մեր սիրած կենդանին: Հաստատ չէիր ցանկանա մի սուրճի բաժակի չափ ապագայում ապրեիր, որը կունենար չոր խտություն և մուգ երանգներ:

Մե՞ծ մեր պատկերացումները հյուսում ենք ուրիշների թելերի հաշվին՝ արդյունքում ունենալով բազմերանգ ու խճճված կծիկ՝ միագույն ու միաձև հյուսի փոխարեն: Երբեմն մեր հյուսը տալով ուրիշին ստանում ենք նույնի քանդվածը, երբեմն էլ մենք ենք քանդում մեկի հյուսը: Ուրիշի վայրկյանի հաշվին երբեք չկլորացնես քո կիսատ վայրկյանը. հավերժ պարտք կմնաս:

Պարզապես սիրիր քեզ կես վայրկյան ավել...

**Նոնա Աբրահամյան,**  
**«Լրագրություն», 3-րդ կուրս**

# ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԵՆՑ ԿԱՐԾԻՔՆԵՐՆ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



Ուրախալի է, որ այս օրերին անցել ենք առցանց ուսուցման համակարգին և հետ չենք մնում ուսումնական գործընթացից:

Ելնելով մեզ հայտնի իրավիճակից՝ ինչպես մի շարք բուհեր, այնպես էլ Արցախի պետական համալսարանը, անցել է առցանց ուսուցման, որն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր:

Դրական կողմերից կարելի է առանձնացնել առցանց պարապմունքների ժամանակ ժամանակակից դիդակտիկ տեխնոլոգիաների օգտագործումը, իսկ բացասական կողմերից հարկ է նշել ուսուցանող-ուսուցանվող կենդանի շփման բացակայությունը, որը կարևոր գործոն է ուսումնական գործընթացի ժամանակ:

Մասնավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողները, ըստ դասացուցակի, բարեխղճորեն մասնակցում են առցանց բոլոր պարապմունքներին և կարևորում դրա նշանակությունը ստեղծված իրավիճակում:

Սիրելի՛ ուսանողներ, մաղթում եմ բոլորիս համբերություն, ողջամտություն, որ կարողանանք մեր պատասխանատվությամբ արդյունավետ օգտագործել ժամանակը՝ ի նպաստ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման: Առողջություն բոլորիս:

**Յոհիսիմե Մկրտչյան,**  
**«Մանկավարժություն և սպորտ» ֆակուլտետի Ուխտագահ, «ՏՄՄ» 4-րդ կուրս**  
\*\*\*

Ողջունում եմ առցանց ուսուցման համակարգով դասաժամերի անցկացումը: Տեղեկատվական տեխնոլոգիաներից արդյունավետ օգտվելը կարևոր է ոչ միայն երիտասարդության, այլև ավագ սերնդի

համար:

Մեկ շաբաթ է, ինչ սկսել ենք հեռավար ուսուցումը, և, ըստ դասացուցակի, ամեն օր անցկացվում են համապատասխան դասաժամերը: Անչափ կարևոր եմ համարում այն, որ պահպանվում է ուսանող-դասախոս կապը, որն ավելի արդյունավետ է դարձնում պարապմունքները: Որպես բացասական կողմ կարող եմ նշել այն, որ ինֆորմացիոն տեխնոլոգիաներից մեծ կախվածություն է առաջանում: Ժամեր շարունակ հեռախոսով կամ համակարգչով դասեր պարպելուց հետո ստիպված ենք լինում նորից այդ միջոցներով պատրաստվել գործնական պարապմունքներին:

Դասաժամերին ինչքան էլ սիրով ու հետաքրքրվածությամբ ենք մասնակցում, միևնույն է, կարոտում ենք համալսարանական կյանքին: Լիահույս ենք, որ այս մարտահրավերները կկարողանանք հաղթահարել: Առողջություն բոլորիս, եկեք բոլորս ամենայն պատասխանատվությամբ մասնակցենք առցանց դասերին, որպեսզի այս օրերին մեր ժամանակն իմաստավորենք նորանոր գիտելիքների ձեռքբերումով:


**Ինեսսա Առուստամյան,**  
**բանասիրական ֆակուլտետի Ուխտագահ,**  
**«Ղայոց լեզու և գրականություն», 3-րդ կուրս:**  
\*\*\*

**Տնտեսագիտության ֆակուլտետը ևս մնացած ֆակուլտետների նման ապրիլի 6-ից անցել է ուսուցման առցանց համակարգին: Ապրիլի 6-ից դասապրոցեսն անցնում է իր բնականոն հունով, դասերն անց են կացվում դասացուցակներին համապատասխան: Գործընթացին հետևում են դեկանը, իսկ կուրսերում՝ համապատասխան խմբի ավագը: Պարապմունքներն անց են կացվում նույնպիսի ոգևորությամբ, ինչպես սովորական ռեժիմով էին: Վստահ ենք, որ այս շրջանը ևս կանցնենք պատվով և հնարավորություն կունենանք նորից հաճախել համալսարան:**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**



համար:

Մեկ շաբաթ է, ինչ սկսել ենք հեռավար ուսուցումը, և, ըստ դասացուցակի, ամեն օր անցկացվում են համապատասխան դասաժամերը: Անչափ կարևոր եմ համարում այն, որ պահպանվում է ուսանող-դասախոս կապը, որն ավելի արդյունավետ է դարձնում պարապմունքները: Որպես բացասական կողմ կարող եմ նշել այն, որ ինֆորմացիոն տեխնոլոգիաներից մեծ կախվածություն է առաջանում: Ժամեր շարունակ հեռախոսով կամ համակարգչով դասեր պարպելուց հետո ստիպված ենք լինում նորից այդ միջոցներով պատրաստվել գործնական պարապմունքներին:

Դասաժամերին ինչքան էլ սիրով ու հետաքրքրվածությամբ ենք մասնակցում, միևնույն է, կարոտում ենք համալսարանական կյանքին: Լիահույս ենք, որ այս մարտահրավերները կկարողանանք հաղթահարել: Առողջություն բոլորիս, եկեք բոլորս ամենայն պատասխանատվությամբ մասնակցենք առցանց դասերին, որպեսզի այս օրերին մեր ժամանակն իմաստավորենք նորանոր գիտելիքների ձեռքբերումով:

**Ինեսսա Առուստամյան,**  
**բանասիրական ֆակուլտետի Ուխտագահ,**  
**«Ղայոց լեզու և գրականություն», 3-րդ կուրս:**  
\*\*\*

**Տնտեսագիտության ֆակուլտետը ևս մնացած ֆակուլտետների նման ապրիլի 6-ից անցել է ուսուցման առցանց համակարգին: Ապրիլի 6-ից դասապրոցեսն անցնում է իր բնականոն հունով, դասերն անց են կացվում դասացուցակներին համապատասխան: Գործընթացին հետևում են դեկանը, իսկ կուրսերում՝ համապատասխան խմբի ավագը: Պարապմունքներն անց են կացվում նույնպիսի ոգևորությամբ, ինչպես սովորական ռեժիմով էին: Վստահ ենք, որ այս շրջանը ևս կանցնենք պատվով և հնարավորություն կունենանք նորից հաճախել համալսարան:**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**

**Տնտեսագիտության ֆակուլտետի Ուխտագահ, «Ֆինանսներ», 3-րդ կուրս**